ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14.20-ի, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1.Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:	Հ. Խաչատրյան
2.Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:	Ամբիոնների վարիչներ
3. Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:	Հ. Խաչատրյան
4.Ուսումնական գործընթացի՝ առերես և առցանց կազմակերպման հարցեր:	Ա. Դալլաքյան
5. • 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների ներկայացում և քննարկում: • 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում: • 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:	Ա. Դալլաքյան
6.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին. • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /ուսումնաճանաչողական պրակտիկա/, • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական պրակտիկա/ • հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
7.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում:	Հ. Խաչատրյան Ամբիոնների վարիչներ
8.Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - 1. Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Աշխատանքային պլանը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ.Նահապետյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա սկզբնական կրթության ֆակուլտետի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - 2. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Աշխատանքային պլանները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնների աշխատանքային պլանները:
2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման հարցը հետաձգել հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - 3. Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Դեկան Հ.Խաչատրյանը տեղեկացրեց, որ ավարտած ուսանողների փոխարեն խորհուրդը համալրվել է նոր ուսանողներով և ներկայացրեց նրանց՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ 1-ին կուրսի ուսանողուհի Իրինա Ադամյան, «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» ԲԿԾ 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Մարտիրոսյան, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ԲԿԾ 4–րդ կուրսի ուսանողուհի Գոհար Քոլոզյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 4. Ուսումնական գործընթացի՝ առերես և առցանց կազմակերպման հարցեր:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է/

Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ ուսումնական գործընթացը հիբրիդային ձևով կազմակերպելու հարցերը հաջողվել է լուծել և դասերը բարեհաջող ընթանում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

Դեկան Հ.Խաչատրյանն առաջարկեց, որ առցանց ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է ունենալ տեխնիկական հարցերով պատասխանատու: Նա առաջարկեց Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Մ.Բարսեղյանի թեկնածությունը, ով արդեն իսկ ունի նման աշխատանքի լավ փորձ և 2020 թվականի մարտից կամավոր աշխատել է՝ մասնակցելով ուսանողների ՝ առցանց ուսուցման անցնելու գործընթացի կազմակերպմանը, ինչպես նաև համակարգել ամփոփիչ ատեստավորման գործընթացի ողջ տեխնիկական մասը:

Հ.Խաչատրյանը նշեց նաև, որ առցանց ուսուցման պայմաններում ֆակուլտետը 1-ին կուրսեցիներին համալսարանին, համալսարանական կրթությանն ադապտացնելու խնդիր ունի: Դեկանատն այդ ուղղությամբ աշխատում է, արդեն իսկ ամրագրվել է յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը որպես առերես ուսուցման օր, ինչը հնարավորություն կտա ուսանողներին առավել լավ ծանոթանալու համալսարանին, ունենալու առերես շփումներ և մասնագիտական քննարկումներ դասախոսների ու համակուրսեցիների հետ: Սակայն առավել նպատակային կլինի նաև առաջին կուրսերում կուրսղեկներ ունենալ՝ այդ աշխատանքները ուսխորհրդի հետ իրականացնելու համար: Առաջին կուրսեցիների համար դժվար է առայժմ կողմնորոշվել և մտնել ուսումնական հիբրիդային գործընթացի մեջ:

Ս.Մարությանը նշեց, որ համակարծիք է տեխնիկական հարցերով պատասխանատու ունենալու գաղափարին և, որ Մ.Բարսեղյանը շատ գիտակ է ու պատրաստված:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ուսումնական գործընթացի՝ առերես և առցանց կազմակերպման վերաբերյալ զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Առցանց ուսուցման տեխնիկական հարցերով պատասխանատու ընտրել Մ.Բարսեղյանին:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ մեկ շաբաթվա ընթացքում թեկնածուներ առաջարկել առաջին կուրսերում կուրսղեկ նշանակելու համար:

4. Առցանց դասեր կազմակերպելու համար ֆակուլտետը պատրաստ է տրամադրել լսարան և համակարգիչ այն դասախոսներին, որոնք առերես ուսուցման օրերին կունենան նաև առցանց դասեր:

Առաջարկություններն անցան միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 5.

- 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների ներկայացում և քննարկում:
- 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:
- 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների քննարկման հարցը հետաձգել հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - 6. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /ուսումնաճանաչողական պրակտիկա/,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական պրակտիկա/
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր:

Զեկուցողներ՝Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Մարությանը, Հ.Խաչատրյանը:

Փոխդեկան Ա.Դալլաքյանը և դեկան Հ. Խաչատրյանն առաջարկեցին ԲԿԾԱ 4-րդ կուրսերի պրակտիկան սկսել հոկտեմբերի 5-ից, քանի որ դասերն առանց այդ էլ երկու շաբաթ ուշացումով են սկսվել, հետևաբար բավարար ժամանակ՝ մեկ ամիս, գոնե պետք է ունենալ պրակտիկայից հետո երկու միջանկյալ ստուգումները կազմակերպելու համար:

Հ.Խաչատրյանն առաջարկեց նաև ֆակուլտետի հետ համագործակցող ուսուցիչների հավաքագրել, որոնք կցանկանան աշխատել հեռավար՝ մանկավարժական պրակտիկան հնարավորինս նպատակային և արդյունավետ կազմակերպելու համար, հենվել նաև ֆակուլտետի՝ մասնագիտությամբ աշխատող ուսանողների վրա:

Միքայելյանը նշեց, որ այդ գործընթացն սկսված է, և որոշ դպրոցների տնօրեններ համագործակցելու վերաբերյալ իրենց համաձայնությունն են տվել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հաստատել ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական գնահատողական պրակտիկան հոկտեմբերի 5-ից սկսելու առաջարկը:

3. Ստեղծել ֆակուլտետի հետ համագործակցող ուսուցիչների ու դպրոցների խումբ և աշխատանքային հարթակ:

Լսեցին- **7.** Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում:

Զեկուցողներ՝ Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ

/Ամբիոնների քաղվածքները և ցանկերը կցվում են:/

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ ԲԿԾԱ 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների բաշխման և ղեկավարների ընտրության աշխատանքներն ավարտված են, ԲԿԾՀ 5-րդ և ՄԿԾԱ առաջին կուրսերի թեմաների բաշխումն ընթացքի մեջ է, մնում է ՄԿԾՀ առաջին կուրսի մագիստրոսների հարցը:

Ք.Հովհաննիսյանը նշեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում ևս ընթանում են թեմաների վերանայման, թարմացման և բաշխման աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը,Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ առաջիկա տասը օրերի ընթացքում ամփոփել աշխատանքները՝ թեմաների բաշխումը, ղեկավարների նշանակումը, և ավարտուն թեմաները ներկայացնել դեկանատ:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Արինե Ավագիմյանի *«Գիտական գրավոր*

խոսք» ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Լ. Պողոսյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս *Արինե Ավագիմյանի «Գիտական գրավոր խոսք»* ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Անցավ միաձայն:

Քվեարկությանը մասնակցել են խորհրդի 19 անդամ, որից՝ կողմ՝ 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

(Խորհրդի 3 անդամ դասի լինելու պատճառով չեն մասնակցել քվեարկությանը:)

ԼՍԵՑԻՆ – **2.** Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս *Կարինե Հակոբի Աղաբաբյանին* դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Զ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս *Կարինե Աղաբաբյանին* դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Անցավ միաձայն:

Քվեարկությանը մասնակցել են խորհրդի 19 անդամ, որից՝ կողմ՝ 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

(Խորհրդի 3 անդամ դասի լինելու պատճառով չեն մասնակցել քվեարկությանը:)

ԼՍԵՑԻՆ – **3.** Մագիստրոսական կրթական ծրագրերի առկա և հեռակա համակարգերի ոչ

մասնագիտական կրթություն ունեցող մագիստրոսների համար մասնագիտական պատրաստության հատուկ դասընթացներ ներկայացնելու և վարելու հարցը:

Դեկան Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ 2020-21 ուսումնական տարում բավականին մեծ թվով ոչ բազային կրթությամբ ուսանողներ են ընդունվել մագիստրատուրա, ովքեր մասնագիտական, մանկավարժական աջակցության կարիք ունեն: Այս հարցը բազմիցս քննարկվել է խորհրդի նիստերին, նման առաջարկով նաև ամբիոնների վարիչներն են հանդես եկել: Հասունացել է պահը մասնագիտական առարկաներից ընդհանրական դասընթացներ նախատեսել այդ ուսանողների համար՝ հատուկ դասընթացների տեսքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոններին քննարկել հարցը, մշակել և վարել հատուկ դասընթացներ՝ մագիստրոսական կրթական ծրագրերի առկա և հեռակա համակարգերի ոչ մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար:

ԼՍԵՑԻՆ - 4. Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի առկա ուսուցման համակարգի ասպիրանտ *Տաթևիկ Արթուրի Հակոբյանի՝ «Թվարկության համակարգերի գենեզիսը և ուսուցման մեթոդաբանությունը»* խորագրով ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի առկա ուսուցման համակարգի ասպիրանտ *Տաթևիկ Արթուրի Հակոբյանի* ատենախոսության թեման հետևյալ ձևակերմամբ՝ *«Թվարկության համակարգերի գենեզիսը և ուսուցման մեթոդաբանությունը»:* Գիտական ղեկավար նշանակել՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Սերգեյի Նահապետյանին:

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Հոկտեմբերի 27-ին՝ ժամը 17.00-ի, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի բկծ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի բկծ 5-րդ կուրսեր), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի մկծ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:	Ամբիոնների վարիչներ
2.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին :	Ամբիոնների վարիչներ
3.Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:	Լ. Պողոսյան, ամբիոնների պատասխանատուներ
4.Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթականհաստատությունների հետ համագործակցության մասին:	Ամբիոնների վարիչներ
5. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:	ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ
6.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին. ▪ հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս /մանկավարժահետազոտական պրակտիկա / ▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա/	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
7. Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:	Ա. Դալլաքյան
8. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:	Ա. Դալլաքյան
9.Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանի և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:	Վ. Կարապետյան
10.Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսեր), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

/Քաղվածքները կցվում է/

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ մայրենիի և նրա դասավանդման մեթեդիկայի ամբիոնում բոլոր թեմաները հաստատված են և աշխատանքները բաշխված են ըստ ղեկավարների: Կատարվում են ոչ միայն առցանց, այլև առերես հանդիպումներ:

Վ.Կարապետյանը ներկայացրեց, որ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում բոլոր թեմաները հիմնականում ընտրված են ըստ մեկ կենտրոնական առանցքի՝ խաղային գործունեության, ինչը հնարավորություն կընձեռի այդ հարցի շուրջ համակողմանի փորձարարական աշխատանք կատարելու և հետագայում ձեռնարկ տպագրելու:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում թեմաներն ընտրելիս ուսումնասիրություն է կատարվել, թե մասնագիտական ինչ կրթություն ունեն մագիստրոսները և այս տեսակետից շատ թեմաներ բոլորովին նոր բնույթի են: Ուսանողները իրազեկված են և ղեկավարների հետ կապերը հաստատված են: Առաջարկվել է, որ շաբաթը մեկ անգամ ամբիոնի որևէ աշխատող ուղղորդող կոնսուլտացիոն աշատանք տանի ուսանողների հետ:

Մանկավրժության ամբիոնում թեմաները հաստատված են և աշխատանքները բնականոն ընթացքով իրականացվում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ.Նահապետյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հետևել՝ որպեսզի Google-classroom էլեկտրոնային հարթակում բացվեն ամբիոնային համապատասխան էջեր՝ ՄԿԾ 1-ին կուրսերի ուսանողների հետ մագիստրոսական աշխատանքների շուրջ աշխատանքներ կատարելու համար, այնտեղ տեղադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ուսումնական նյութերը;

ԼՍԵՑԻՆ - 2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին :

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Գյուլամիրյանը ներկայացրեց, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա » ՄԿԾ հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսների հետ հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել հարթակում կատարված և դեռևս կատարվելիք աշխատանքների շուրջ: Գյուլամիրյանը ներկայացրեց, որ ուսանողուհի Անի Հարությունյանի մագիստրոսական աշխատանքի կատարման ընթացքը խնդրահարույց է և մի փոքր անորոշ, քանի որ նա նախորդ տարի հեռացվել էր համալսարանից, այժմ հանձնում է ակադեմիական պարտքերը, երբ կլինի վերականգնման հրամանը նրա համար ևս կկազմակերպվի նախնական լսումներ և ամբիոնը կկարողանա կայացնել որոշում աշխատանքը պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ: Ամբիոնի վարչը նշեց, որ ուսանողուհու հետ կապը ամբիոնը պահում է:

Վ. Կարապետյանը ներկայացրեց, որ «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսների հետ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով և իրականացվում են համագործակցային սկզբունքով. բոլոր ուսանողների հետ ըստ անհրաժեշտության աշխատում են բոլորը՝ խմբով: Խնդիրներ չկան ամբիոնում:

Ք. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա » ՄԿԾ երկրորդ կուրսերում անցյալ կիսամյակում համավարակով պայմանավորված՝ չեն հասցրել իրականացնել հետազոտական-փորձարարական աշխատանք, դպրոցական արձակուրդն էլ երկարացվել է, ուստի որոշվել է հետազոտական մասը կատարել ուսուցիչների հետ հարցախույզերի ճանապարհով:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա » ՄԿԾ հեռակա երրորդ կուրսերում նաև հարթակով են աշխատում խորհրդատվությունը ակտիվացնելու առումով: Արտառոց դեպք չկա: Լինում են նաև առերես հանդիպումներ:

Մանկավարժության ամբիոնում անցած շաբաթ նախապաշտպանություն է իրականացվել Ա.Թոփուզյանի կողմից: ՄԿԾ հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսների աշխատանքների հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

Զեկուցող՝ Լ. Պողոսյան, ամբիոնների վարիչներ

Լ. Պողոսյանն անդրադարձավ այն խնդրին, որ ամբիոնների որակի պատասխանատուների հետ աշխատանքները ոչ միշտ են պարբերաբար կատարվում: Նա առաջարկեց թե՛ դասալսումների ժամանակ, թե՛ թեզերի շուրջ կատարվող աշխատանքների շրջանակում ընդգրկել նաև որակի պատասխանատուներին և հանձնարարել նրանց հաշվետվություններ ներկայացնել այդ աշխատանքների մասին: Յուրաքանչյուր ամբիոնի առաջարկվեց ներկայացնել այն դասընացները, որոնց բովանդակությունը առցանց ուսուցման տեսանկյունից կարիք ունի ուսումնասիրման և քննարկման: Կարևոր է վերլուծել գնահատման գործիքները, դիտարկել դրանք ու

համապատասխանեցնել վերջնարդյունքներին: Կարևոր է շարունակել իրականացնել նաև մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացը:

Պետք է ավանդույթ դառնա, որ յուրաքանչյուր դասախոս ներկայցնի մեկ առարկայի ինքնավերլուծություն: Գուցե մշակվի ինքնավերլուծության ձևաչափ: Լիցենզավորման ժամանակ ինքնավերլուծությունները կարևոր փաստաթղթեր են:

Ամբիոններին առաջարկեն հարցումներ իրականացնել իրենց դասավանդվող առարկաների մասին՝ դրանց բովանդակության և կազմակերպման մեթոդների առումով:

/Հաշվետվությունը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Ջ.Գյուլամիրյանը , Գ.Հայրապետյանը:

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն իրականացրել է մեկնարկային գիտելիքների ստուգում, որի արդյունքները կներկայացվեն առաջիկայում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:
2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ քննարկումներ անցկացնել որակի պատասխանատուների հետ և որոշել հիմնարար առարկաները, որոնց գծով նպատակահարմար է անցկացնել մնացորդային գիտելիքների ստուգում:

ԼՍԵՑԻՆ - **4.** Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ալլա Դալլաքյանը, Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը նշեց, որ այս ուսումնական տարում ֆակուլտետի համագործակցությունը մանկապարտեզների և դպրոցների հետ այնքան էլ սերտ չէ, հիմնականում իրականացվում է կամավորական աշխատանքների և պրակտիկայի շրջանակներում: Հեռավար ուսուցման պայմաններում կարելի է կրթական հաստատությունների մասնագետների համար մշակել և իրականացնել հեռավար սեմինարներ, վերապատրաստումներ, ինչի կարիքը զգում են և՛ մանկապարտեզները, և՛ դպրոցները:

Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում պատրաստվել է վերապատրաստման ծրագիր, փաթեթ սկսնակ մասնագետների համար: Նորությունն այն է, որ նախադպրոցականների հետ իրականացվող խաղային գործընթացում ներառվել է նաև շախմատը: Դա պետք է նպաստի նախադպրոցականի տրամաբանական և պատկե-

րային մտածողության ձևավորմանը: Ծրագրի նպատակը նաև սկսնակ մասնագետներին և մասնագիտական կրթություն չունեցողներին նորագույն տեխնոլոգիաներին ծանոթացնելն է:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Վերապատրաստման փաթեթն ամբողջովին պատրաստ լինելու դեպքում ներկայացնել խորհրդի քննարկմանը:

Առաջարկություններն անցան միաձայն:

ԼՍԵՑԻՆ - **5.** Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ

/Պլանները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Լ.Պողոսյանը, Հ.Խաչատրյանը:

Դեկան Հ.Խաչատրյանն ասաց, որ ֆակուլտետում գործում է ՈՒԳԸ-ի աշխատանքների հարթակ: Ուսանողները պետք է կցվեն, դիտեն առաջադրվող նյութերը և քննարկումներ կատարեն:

Ուսանողների կողմից առաջարկություն եղավ քննարկվող թեմաների շրջանակում ընդգրկել նաև ռեֆերատին ներկայացվող պահանջները, ռեֆերատ գրելու ձևաչափը:

Լ.Պողոսյանը առաջարկեց ներկայացնել մանկավարժության ամբիոնի պատրաստած ձևաչափը՝ որպես ընդհանուր մի հիմք, որը տարբեր ամբիոններում կարող է վերափոխվել՝ պայմանավորված տվյալ առարկայի մասնագիտական պահանջներով:

Արդյունքում Հ.Խաչատրյանն առաջարկեց ներկայացնել ընդհանուր պահանջները, բայց նշել, որ տարբեր առարկաների կապակցությամբ դրանք կարող են փոփոխությունների ենթարկվել, որոնց մասին կտեղեկացնի յուրաքանչյուր դասախոս: Կտեղադրվեն նաև գնահատման չափանիշները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **6.** Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս /մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»

մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա/

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Զեկույցները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Մարությանը, Ս. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկայի ղեկավարներին ԲԿԾ 4-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման ժամկետների և ձևաչափի կազմակերպման հարցը ուշադրության կենտրոնում պահել՝ նախօրոքք պատրաստ լինելու համար:

ԼՍԵՑԻՆ - 7. Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

Զեկուցողներ՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ալլա Դալլաքյանը, Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- **8.** 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ԵՎ.Մնացականյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ հետևել հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի կազմակերպման փուլերի ժամանակացույցի իրականացմանը:

ԼՍԵՑԻՆ - 9. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանի և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Վ.Կարապետյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել աշխատանքային պլանը:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Լիլիթ Ղազարյանի՝ «Ավագ նախադպրոցականի ինքնուրույն վարքագծի օրինաչափ դրսևորումները փորձարարական գործունեության կազմակերպման գործընթացում»* խորագրով ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Լիլիթ Ղազարյանի* ատենախոսության թեման հետևյալ վերաձևակերմամբ՝ *«Ինքնուրույն վարքագծի օրինաչափ դրսևորումները ավագ նախադպրոցականի փորձարարական գործունեության ընթացքում»:* Գիտական ղեկավար նշանակել՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ս.Ա.Մարությանին:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Մարինե Աբասյանի* ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Մարինե Աբասյանի* թեկնածուական ատենախոսության թեման՝ հետևյալ վերնագրով՝ *«Նախադպրոցական տարիքի*

երեխաների սոցիալական զարգացման օրինաչափությունները ակմեկվալիտատիվ հայեցակարգի համատեքստում», և գիտական ղեկավար նշանակել՝ հ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ս.Կարապետյանին:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ – **3.** Ուսանողներին աջակցություն ցուցաբերելու հարցի մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ պատերազմական իրավիճակով և համավարակով պայմանավորված՝ ֆակուլտետի շատ ուսանողներ ու նրանց ընտանիքներ տարաբնույթ օգնության կարիք ունեն՝ սոցիալական, բարոյական, հոգեբանական: Եվ ցավոք նման ուսանողների թիվը գնալով աճում է: Նա նաև նշեց, որ նման ուսանողների հետ դեկանատը աշխատում է՝ համագործակցելով է ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ներկայացուցիչների հետ: Այդ աշխատանքները համակարգված և պարբերաբար իրականացնելու կարիք կա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Զ.Գյուլամիրյանը, ԵՎ.Մնացականյանը, Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ստեղծել աջակցության խումբ՝ ամբիոնների վարիչների պատասխանատվությամբ, խմբում ներգրավել ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի նախագահներին: Ուշադրության կենտրոնում պահել այդ ուսանողներին՝ նրանց օգնելու և խնդիրներին հնարավորինս լուծումներ տալու նպատակով:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Նոյեմբերի 20-ին ՝ ժամը 14.00-ին տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը *(բանավոր հարցում):*

Օրակարգ ՝

‹‹ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման›› կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը:

Լսեցին- ‹‹ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման›› կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Որոշեցին- ‹‹ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման›› կարգի համաձայն՝ կրթաթոշակի ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի հետևյալ ուսանողների թեկնածությունները՝

1. *Գոհար Մանուկի Քոլոզյան* – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրս,
2. *Սյուզաննա Արտակի Խաչատրյան* - Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրս:

Կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Նոյեմբերի 30-ին՝ ժամը 18.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1. Միջազգային համագործակցության ծրագրերի և նախագծերի մասին:	Լ. Պողոսյան, ամբիոնների վարիչներ
2.Ասպիրանտների/հայցորդների ատեստավորման մասին:	Ամբիոնների վարիչներ
3.Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:	Ամբիոնների վարիչներ
4. Մանկավարժական պրակտիկաների մասին (արդյունքներ, ընթացք) ▪ հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ ▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ ▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացք, ▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատողական պրակտիկաների ընթացք:	Լ.Պողոսյան Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
5. Ընթացիկ հարցեր::	

ԼՍԵՑԻՆ - 1.Միջազգային համագործակցության ծրագրերի և նախագծերի մասին:
Զեկուցող՝ Լ.Պողոսյան, ամբիոնների վարիչներ

/Զեկուցումը կցվում է/

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը նշեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների, ձեռք բերել Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի հետ մագիստրոսական թեզերի փոխադարձ գնահատման և ղեկավարման մասին պայմանավորվածություններ, որոնք, ցավոք, այս տարի հնարավոր չի եղել իրականացնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ասպիրանտների/հայցորդների ատեստավորման մասին:
Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Ֆակուլտետի ամբիոնների վարիչները տեղեկացրեցին , որ ամբիոնները չունեն ասպիրանտներ, բացառությամբ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի, որի ասպիրանտը՝ Տաթևիկ Հակոբյանը, 2020 թվականի աշնանն է ընդունվել, և հետևաբար հաշվետվություն ներկայացնել դեռևս չի կարող:

Իսկ ահա ամբիոնների հայցորդները բոլորն ատեստավորվել են և ամբիոնային նիստերի քաղվածքները ուղարկվել են համալսարանի գիտահետազոտական կենտրոն.

- Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն՝ 1 հայցորդ
- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն՝ 4 հայցորդ
- Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն՝ 3 հայցորդ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ա.Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման հա-մակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Ամբիոնների վարիչները և ներկայացուցիչները նշեցին, որ մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների ուղղությամբ աշխատանքներն այս պահի դրությամբ էլ ընթանում են, մագիստրոսները և ղեկավարները ակտիվ աշխատում են հարթակում, ամբիոններում իրականացվել են նախնական լսումներ և առաջիկայում էլ նախատեսված են վերջնական նախապաշտպանությունները: Ավարտին ամբիոնները կներկայացնեն իրենց եզրակացությունները՝ ուսանողների թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

Լ.Տեր-Գրիգորյանը ներկայացրեց, որ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն իրականացրել է նախնական հանդիպումներ և նախապաշտպանություն, երկրորդ նախապաշտպանությունը պետք է իրականացվի դեկտեմբերի 1-4-ն ընկած ժամանակահատվածում: Աշխատանքները պատրաստ են և բոլորը կերաշխավորվեն պաշտպանության:

Մաթեմատիկայի և տարական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում նախապաշտպանությունն իրականցվելու է դեկտեմբերի 2-րդ շաբաթ, և մինչև դեկտեմբերի 22-ը վերջնական արդյունքները կներկայացվեն:

Մանկավարժության ամբիոնում նույնպես իրականացվում են այդ աշխատանքները և վերջնական արդյունքները պարզ կլինեն մինչև դեկտեմբերի 22-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:
2.Հանձնարարել ամբիոններին՝ նախապաշտպանություններն ավարտելուց հետո դեկտեմբերի 22-ին քաղվածքները ներկայացնել դեկանատ:

ԼՍԵՑԻՆ - **4.** Մանկավարժական պրակտիկաների մասին (արդյունքներ, ընթացք)

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացք, առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատողական պրակտիկաների ընթացք

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ.Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Դեկտեմբերի 24-ին՝ ժամը 18.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը: Նիստին մասնակցում էր նաև ֆակուլտետի ուսանողների կամավորական աշխատանքները համակարգող Իրինա Պոնոմարենկոն:

Օրակարգ՝

1. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
2. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:	Արիմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան
3. Ամբիոնների՝ 2020-2021թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:	Ամբիոնների վարիչներ
4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին.	Ա. Միքայելյան
▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին	Ա. Ղազարյան
▪ հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և 5-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատարստական աշխատանքների մասին:	
5. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
6.Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.	Լ.Պողոսյան,
▪ Որակի ապահովման խումբ	Ջ.Գյուլամիրյան
▪ Ուսումնամեթոդական խումբ	
▪ Համալսարան դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում	Լ.Պողոսյան
▪ Կամավորական գործունեություն	Ի.Պոնոմորենկո
▪ Գրական ակումբ	Եվ.Մնացականյան
7. Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - 1. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Զեկուցումը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Եվ.Մնացականյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Զեկուցող՝ Արիմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան

Բանախոս Արևիկ Խուգեյանը պատրաստել էր ամբիոնների կրտսեր գիտաշխատողների գործունեության վերաբերյալ հաշվետվություն, սակայն խոսափողի խափանման և կապի հետ առկա տեխնիկական խնդիրների պատճառով, չկարողացավ ներկայացնել այն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Տեխնիկական խնդիրների պատճառով հարցի քննարկումը տեղափոխել խորհրդի հաջորդ նիստ:

ԼՍԵՑԻՆ - 3. Ամբիոնների՝ 2020-2021թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունը կցվում է:/

Վ.Կարապետյանը առաջարկեց նաև ֆակուլտետային ամսագիր ստեղծել, որը կարող է ընդգրկվել ՌԻՆՑ-ի շրջանակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ալ.Դալլաքյանը, Ա.Միքայելյանը, Ք.Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունն ուղարկել խորհրդի անդամներին՝ գրավոր ծանոթացման:

ԼՍԵՑԻՆ - 4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանք ների և արդյունքների մասին.

- հեռկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին

  - հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և 5-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատարստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ա.Միքայելյանը, Հ.Խաչատրյանը:

Հովհաննիսյան Ք. նշեց, որ այս պրակտիկային ընդգրկված չէին դպրոցները, և դպրոցների կողմից գնահատվող համագործակցության վերաբերյալ բաղադրիչը փոխարինվել է մեթոդիստների կողմից՝ ուսանողների այդ ոլորտի գործունեությանն ու կարողություններին ուղղված բնութագրերով, որը նույնպես գնահատվում է: Նա առաջարկեց, որ թվային գնահատականով բնութագրերը փոխվեն:

Ա. Միքայելյանը նշեց, որ հակառակ այն բանին, որ պրակտիկան դպրոցներում չի կազմակերպվել, այդ բաղադրիչը պահպանվել է, այն փոխարինվել է բնութագրերով, որոնք պետք է միավորային գնահատման տեսք ունենան և միավորվեն ուսանողների պրակտիկայի գնահատման մյուս թվային բաղադրիչներին՝ ձևավորելով նրանց պրակտիկայի վերջնական ՄՈԳ-երը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Զեկուցումը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Հ.Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը:

Գ.Հայրապետյանն անդրադարձավ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսում վերականգնված ուսանողուհի Անուշ Պողոսյանի թեզը (գիտական ղեկավար՝ Գ.Հայրապետյան) պաշտպանության երաշխավորելու հարցին. ուսանողուհին միայն դեկտեմբերին է հրամանագրվել և նրա աշխատանքը պաշտպանության երաշխավորելու հարցը կասկածելի է, քանի որ նա ժամանակ և հնարավորություն չի ունենա այս կարճ ժամկետում հետազոտություն իրականացնել :

Կիսելով ժամկետների սղության և այդ ժամկետներում աշխատանքն ավարտուն տեսքի բերելու հետ կապված պարոն Հայրապետյանի մտահոգությունը՝ Հ.Խաչատրյանը նաև նկատեց, որ ուսանողը նախորդ տարի հոկտեմբեր ամսին է հեռացվել համալսարանից «Մանկավարժական մարդաբանություն» առարկայից անբավարար առաջադիմության պատճառով, իսկ մագիստրոսական թեզի հետ կապված բոլոր բաղադրիչները՝ հետազոտական աշխատանք կիսամյակում, հետազոտական պրակտիկա, մագիստրոսական ատենախոսության պատրաստում ուսանողը դրական է հանձնել բոլոր 2 տարիներին, բոլոր կիսամյակներում: Սա հույս է տալիս ենթադրել, որ ուսանողը նախատեսված ժամկետներում կատարել է մագիստրոսական թեզին առնչվող իր աշխատանքները, դրական գնահատվել և, որ արդեն հոկտեմբեր ամսին ուսանողն արդեն պետք է ավարտած լիներ աշխատանքի հետազոտական մասը և գտնվեր տվյալների հավաքագրման և ամփոփման փուլում. նկատի ունենաք նաև, որ այս տարի էլ, ինչպես և նախորդ տարիներին, բոլոր ամբիոնները նոյեմբերից արդեն նախնական նախապաշտպանություններ են սկսել: Դեկանատը սահմանված կարգով՝ չխախտելով ժամանակային սահմանները ընթացք է տվել ուսանողի վերականգնման դիմումին և սպասել է ուսումնական մասից ուսանողի վերականգնման հրամանին: Ուսանողի հրամանագրումը, որոշ օբյեկտիվ պատճառներով, դեկտեմբերի 18-ին է եղել: Դեկանատը դեկտեմբերի 20-ին ստացել է այն և անմիջապես ուղարկել նաև ամբիոն՝ ուսանողի նախապաշտպանության ժամկետները որոշելու համար: Հ.Խաչատրյանը նշեց, նաև, կար ֆակուլտետի խորհրդի որոշում՝ մինչև դեկտեմբերի 22-ը իրականացնել վերջնական նախապաշտպանություններ և դեկանատ ներկայացնել քաղվածքներ՝ մագիստրոսների աշխատանքները հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ, այդ մտահոգությամբ ևս պայմանավորված՝ դեկանատը հրամանագրումից առաջ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնին տեղյակ էր պահել, որ ամբիոնի մագիստրոս Անուշ Պողոսյանը վերականգնման գործընթացի մեջ է:

Իսկապես ժամկետները բավականին սուղ են, գիտական ղեկավարի մտահոգությունը հասկանալի է: Ստեղծված իրավիճակում գիտական ղեկավարի, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի իրավունքն է որոշել՝ նախատեսված ժամկետներում ուսանողը ի վիճակի կլինի աշխատանքն ավարտուն տեսքի բերելու հարցը, որոշել նախապաշտպանության կազմակերպման ժամանակը և վերջապես ուսանողին երաշխավորելու կամ չերաշխավորելու հարցը: Միայն հարկավոր է քանի դեռ կան ժամկետներ՝ ամբիոնը մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի համաձայն նախատեսված ժամկետներում կազմակերպի բոլոր անհրաժեշտ քայլերը:

Ք.Հովհաննիսյանն ասաց, որ առանձին նախապաշտպանություն կկազմակերպվի, և եթե մագիստրոս Անուշ Պողոսյանի աշխատանքը բավարարի սահմանված բոլոր պահանջներին , ապա՝ կերաշխավորվի:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն

2. Հանձնարարել Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք.Հովհաննիսյանին՝ գիտական ղեկավարի հետ քննարկել և ապա կազմակերպել «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի մագիստրոս Անուշ Պողոսյանի նախապաշտպանությունը և այդ հարցի առնչությամբ ընթացակարգային քայլերը՝ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի համաձայն: Ուսանողի աշխատանքը երաշխավորելու մասին ամբիոնային որոշումը՝ քաղվածքի տեսքով ներկայացնել դեկանատ՝ կարգով սահմանված ժամկետներում:

ԼՍԵՑԻՆ - 6.Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն
- Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան, Լ.Պողոսյան, Ի.Պոնոմորենկո, Եվ.Մնացականյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Գրական ակումբի ղեկավար Եվա Մնացականյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ երկրում տիրող իրավիճակով պայմանավորված գրական ակումբի աշխատանքներն այս կիսամյակ չեն իրականացվել: Նա հույս հայտնեց, որ հաջորդ կիսամյակում հնարավոր կլինի կազմակերպել գրական ակումբի աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Հ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - 1.Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Հ.Հ. Հարությունյանի և Լ.Ս. Ավանեսյանի *«Տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրներ (1-4, 5-6-րդ դասարաններ)»* ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան:

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Հ.Հ. Հարությունյանի և Լ.Ս. Ավանեսյանի *«Տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրներ (1-4, 5-6-րդ դասարաններ)»* ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու համար:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Ֆակուլտետի 2020 թվականի տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Հաշվետվությունը կցվում է: Այն տեղադրված է նաև առցանց հարթակում:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Եվ.Մնացականյանը, Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը:

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Փետրվարի 24-ին՝ ժամը 16.00-ի, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :*	Ամբիոնների վարիչներ
2.Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:	Ա.Դալլաքյան
3. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:	Ա.Դալլաքյան
4.Հաշվետվություն հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:	Հանձնաժողովի նախագահ
5.Հաշվետվություն մանկավարժական պրակտիկաների նախապատ-րաստական աշխատանքների (և ընթացքի) մասին.	Ա. Միքայելյան
• առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկաների թղթապանակների պաշտպանությունների արդյունքներ	Ա. Ղազարյան
• հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների մանկավարժական պրակտիկաների ընթացքի և կազմակերպման մասին	

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա/ մեկնարկի մասին
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա/ նախապատրաստական աշխատանքների մասին:

6. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Արիմբյուրոյի նախագահ

Ա. Խուգեյան

7.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :*

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջ. Գյուլամիրյանը ներկայացրեց, որ ավարտական աշխատանք առկա և հեռակա համակարգերում և մագիստրոսական թեզ ՄԿԾԱ-ում պատրաստում են գրեթե 90 ուսանող: Կազմվել է ժամանակացույց և առաջիկա շաբաթվանից ամեն շաբաթ ղեկավարները կհանդիպեն ուսանողների հետ, և կկազմակերպվի նախնական մի նախապաշտպանություն: Ինքը տկն Գյուամիրյանը արդեն երեք շաբաթ՝ շաբաթը մեկ անգամ հանդիպում է ուսանողների հետ՝ ուղղորդումներ և խորհրդավություն իրականացնելով հետազոտական աշխատանք-ների վերաբերյալ:

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք.Հովհաննիսյանը նշեց, որ դասերի վերսկսման հետ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շուրջ իրականացվող առցանց աշխատանքները փոխարինվել են առերես հանդիպումներով: ԲԿԾՀ 5-րդ կուրսի ուսանողները մանկավարժական պրակտիկայի են և իրենց հետազոտական աշխա-տանքները փորձում են իրականացնել նաև դպրոցում՝ առերես: Մագիստրոսների աշ-խատանքները նույնպես ակտիվացել են և ժամանակին կհասցնեն: Հավանաբար մարտի վերջին նախապաշտպանություն իրականացնելու համար հարմար ժամկետ կլինի:

Քանի որ նիստին չէր մասնակցում Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ պարոն Կարապետյանը, աշխատանքների մասին ներկայացրեց ամբիոնի պրոֆեսոր տիկին Մարությանը:

Ս.Մարությանը նշեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում ակտիվ աշխատանք է տարվում ավարտական և մագիստրոսական աշխատանքների շուրջ. թեզերի պատրաստության գործընթացը կազմակերպվում է օրվա տարբեր ժամերի՝ փորձելով առավելագույնս օգնել ուսանողներին: Մանկապարտեզները բացվելու հանգամանքով պայմանավորված՝ ուսանողների հետազոտական աշխատանքները առայժմ ընթացքի մեջ են: Չերաշխավորվող աշխատանքներ չեն լինի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Հաշվետվություն հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ՝ Պ.Գևորգյան

Քանի որ հանձնաժողովի նախագահը ներկա չէր նիստին, հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նախագահը:

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ քննարկել ամբիոններում հաշվետվությունը և շահեկան առաջարկությունները նկատի ունենալ հետագա աշխատանքում:

ԼՍԵՑԻՆ - 5.Հաշվետվություն մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների (և ընթացքի) մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկաների թղթապանակների պաշտպանությունների արդյունքներ
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների մանկավարժական պրակտիկաների ընթացքի և կազմակերպման մասին
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա/ մեկնարկի մասին
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա/ նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ. Պողոսյանը, Ս.Մարությանը, Շ.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 6. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Զեկուցող՝ Ա.Խուգեյան

/Զեկույցը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա. Դալլաքյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

7. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - **1.** ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի 2021-2025թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի հաստատման մասին հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ջ.Գյուլամիրյանը, Ալլա Դալլաքյանը, Հ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1.Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի 2021-2025թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանը:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին 2021-2025թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրի 2021 թվականի գործողությունների պլանով նախատեսված քայլերը և անելիքները ներառել ամբիոնների աշխատանքային պլաններում:

Աշխատանքների համակարգումը հանձնարարել փոխդեկան Լ.Պողոսյանին:

ԼՍԵՑԻՆ - **2.** Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների 2020-2021 ուումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը կրթական հաստատություններում մասնագիտական գործունեություն ճանաչելու և արդյունքները հաստատելու մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Հովհաննիսյանը, Ե.Մնացականյանը, Ա.Դալլաքյանը:

Լ.Պողոսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ կամավորները իրենց աշխատանքի վերաբերյալ PP ներկայացումներ էին պատրաստել, և նրանց աշխատանքների ներկայացումը կազմակերպվել է 1-ին կուրսեցիների լսարանում՝ որպես կամավորական աշխատանք ծավալելու խթանման լավ տարբերակ: Ներկայացումները տեղադրված են ֆակուլտետի կամավորական աշխատանքի դասընթացի համար բացված Google-classroom հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Սկզբնական կրթության ֆակուլտետի ներքոնշյալ ուսանողների 2019-

2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը ճանաչել որպես մասնագիտական գործունեություն և նրանց տվյալները ներմուծել համալսարանի Google-classroom կրթական հարթակ.

1. Խաչատրյան Սյուզաննա Արտակի՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բկծ 4-րդ կուրս -173 ժամ (4.32 միավոր)
2. Առաքելյան Վարդուհի Արայիկի՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բկծ 4-րդ կուրս -191 ժամ (4.77 միավոր)
3. Կոստանդյան Գոհար Վահանի՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բկծ 4-րդ կուրս -170 ժամ (4.25 միավոր)

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ *Աստղիկ Ռուբենի Հովյանի «Առարկայական զուգադրումների իրականացման մեթոդները մայրենիի դասագործընթացում որպես ուսումնական նյութի գիտակցական յուրացման միջոց»* խորագրով ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ *Աստղիկ Ռուբենի Հովյանի* ատենախոսության թեման հետևյալ ձևակերմամբ՝ *«Առարկայական զուգադրումների իրականացման մեթոդները մայրենիի դասագործընթացում որպես ուսումնական նյութի գիտակցական յուրացման միջոց»*: Գիտական ղեկավար նշանակել՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ.Գյուլամիրյանին:

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Մարտի 29-ին՝ ժամը 14.10-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

Օրակարգ՝

1.2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առկա և հեռակա *(1-ին, 2-րդ, 3-րդ կուրսեր)* ուսուցման համակարգերի քննաշրջանների ակադեմիական պարտքերի մարման արդյունքները:	Ա.Դալլաքյան
2.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:	Ամբիոնների վարիչներ
3.Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:	Լ.Պողոսյան, ամբիոնների վարիչներ
4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին. • *Հեռակա ուսուցման համակարգ բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկա. (արդյունքներ), (3-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաների ավարտ)* • *Առկա ուսուցման համակարգ բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր. մանկավարժական պրակտիկա. (նախապատրաստում)* • *Առկա ուսուցման համակարգ մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկա. (նախապատրաստում)* • *Հեռակա ուսուցման համակարգի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսեր մանկավարժահետազոտական պրակտիկա. (ընթացք).*	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան Լ.Պողոսյան
5. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
6. Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - **1.** 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առկա և հեռակա(1-ին, 2-րդ, 3-ր կուրսեր) ուսուցման համակարգերի քննաշրջանների ակադեմիական պարտքերի մարման արդյունքները:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունները կցվում են:/

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ ամբիոնը դեռևս 2020-21 ուսումնական տարվա սկզբին մշակել է շրջանավարտների աշխատանքի մշտադիտարկման ժամանակացույց, համաձայն որի՝ հանդիպումներ և քննարկումներ են կազմակերպվում ուսանողների հետ: Ամբիոնի յուրաքանչյուր նիստում քննարկվում է նշված հիմնախնդրի ուղղությամբ աշխատանքների ընթացքը, նշվում են խնդիրները և մշակվում դրանց հաղթահարման ուղիները: Առցանց պայմաններում շրջանավարտների աշխատանքային գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով բոլոր ավարտական կուրսերի համար ստեղծվել են էլեկտրոնային հարթակներ, որոնցում իրականացվում են ուսանողների և նրանց ղեկարները աշխատանքային քննարկումները: Ավարտական կուրսերի ուսանողների համար հնարավորություն է ստեղծվել լսելու 2020-2021թթ. ՄԿԾՀ 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ձայնագրություններից, ինչը մեծապես կնպաստի ավարտաճառերի և սահիկահանդեսների պատրաստմանը, ինչպես նաև ներկայացվող պահանջներին բավարարող աշխատանքներ ներկայացնելուն: Ամբիոնի գծով պատրաստվում է 66 աշխատանք:

Ք.Հովհաննիսյանն ասաց, որ նախորդ ամբիոնի նիստում քննարկվել և ի մի են բերվել ղեկավարների կարճ հաշվետվությունները: Պատկերն այնպիսին է, որ 30՝ առկա ԲԿԾ, աշխատանքներն ընթանում են պատշաճ, ապրիլի 15-16-ին նախապաշտպանությունները կկատարվեն, համենայն դեպս 22-23-ին հավելյալ հնարավորություն կստեղծվի նրանց համար, ովքեր խնդիրներ կունենան: ԲԿԾՀ 29 ուսանողների համար ապրիլի 29-30-ին կկազմակերպվի նախապաշտպանություն, իսկ վերջնական մինչև մայիսի 5-ը: ՄԿԾԱ 8 ուսանողների աշխատանքները նույնպես պատրաստ են, խնդրահարույց ուսանոնղներ չկան:

Վ.Կարապետյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ամբիոնում քննարկումները և լսումները տևել են երեք օր՝ փետրվարի 26-28: Աշխատանքները

բնականոն ընթացքի մեջ են և խնդրահարույց դեպքեր չկան: Հնարավոր է որ մեկ-երկու դեպքում վերնագրի մեջ մասնակի փոքրիկ փոփոխություն կատարվի՝ աշխատանքի բովանդակությունն ավելի ստույգ արտահայտելու համար:

Խնդիրներ կարող են լինել այն ուսանողների հետ, որոնք վերականգնվում են և նրանց հրամանագիրը ուշ լինելու կապակցությամբ կարող են ժամանակի խնդիրներ լինեն:

Ա.Թոփուզյանը խնդրեց, որ աշխատանքները ներկայացնի Լ.Պողոսյանը, ով համակարգել է ամբիոնի ավարտական աշխատանքների քննարկման աշխատանքները: Վերջինս տեղեկացրեց, որ որևէ խնդիր չկա: Ժամանակ է տրվել, որ աշխատանքները վերջնական տեսքի բերվեն: Կնշանակվի վերջնական նախապաշտպանության օր:

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Միքայելյանը, Ա.Դալլաքյանը:

Ի պատասխան պարոն Կարապետյանի մտահոգության՝ Հ.Խաչատրյանն ասաց, որ տարկետումից վերադարձող և վերականգնվող ուսանողները, կարգի համաձայն, վերականգնվում են նույն տեղում և նույն ժամանակահատվածում, որ ժամանակահատվածում նրանք գնացել տարկետման, և հետևաբար շարունակում են իրենց ուսումնառությունը և աշխատանքը արդեն վաղօրոք ընտրած, հաստատված և որոշակի աշխատանքներ կատարած ավարտական կամ մագիստրոսական աշխատանքի իր թեմայի շուրջ: Եթե թեմաներում շտկումներ կան, այդ հարցը պետք է վաղօրոք քննարկվի ամբիոնում, ապա ֆակուլտետի խորհրդի նիստում՝ ըստ սահմանված ժամկետների:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ մինչև ապրիլի 16-ը դեկանատ ներկայացնել առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի, իսկ մինչև ապրիլի 30-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին ամբիոնային քաղվածքները:

ԼՍԵՑԻՆ - **3.** Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: *Զեկուցող՝Լ.Պողոսյան*

/Հաշվետվությունը կցվում է:/

Լ. Պողոսյանը նշեց, որ պանդեմիայի ընթացքում և պայմաններում միջազգային համագործակցության կոնտեքստում աշխատանքների ընթացքը գոհացուցիչ չէ, որոշ աշխատանքներ կազմակերպվում են առցանց, միջազգային գործընկերները դժվարությամբ են արձագանքում: Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել միջազգային գիտաժողով՝

առցանց տարբերակով և փորձել ակտիվացնել միջազգային մեր գործընկերներին և կապերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.**Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- *Հեռակա ուսուցման համակարգ բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկա. (արդյունքներ), (3-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաների ավարտ)*
- *Առկա ուսուցման համակարգ բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր. մանկավարժական պրակտիկա. (նախապատրաստում)*
- *Առկա ուսուցման համակարգ մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկա. (նախապատրաստում)*
- *Հեռակա ուսուցման համակարգի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսեր մանկավարժահետազոտական պրակտիկա. (ընթացք)*

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

Ա. Միքայելյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ միայն նախատեսված բոլոր պրակտիկաները իրականացվել են հավուր պատշաճի. ֆակուլտետը կարողացել է կազմակերպել առցանց պրակտիկաները՝ համակցելով առերես տարբերակի հետ, բոլոր ուսանողները հնարավորություն են ունեցել լինելու կրթական հաստատություններում:

Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Ադամյան չի մասնակցել թղթապանակի պաշտպանությանը (ըստ ուսանողի՝ թղթապանակի պաշտպանության օրերին խնամել է ծնողին հիվանդանոցում), իհարկե հարցը ամբողջապես կուսումնասիրվի, և ուսանողուհին ունի թղթապանակը պաշտպանելու հնարավորություն լուծարային փուլերում:

Առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Շառյան Արմինեն դիմել է համալսարանի ռեկտորին՝ պրակտիկան իրենց գյուղում անցկացնելու խնդրանքով, քանի որ նա երկրորդ կարգի հաշմանդամ է և այս պահին՝ ըստ ներկայացրած հիվանդության թղթերի՝ ունի ամբուլատոր հսկողության տակ գտնվելու կարիք, տեղաշարժվելու դժվարություն և խնդրել է պրակտիկան իր գյուղում անցկացնել: Այս ընթացքում ուսանողուհին հաճախում է «Վարդանանք» կրթահամալիր:

Այս հարցի շրջանակներում նշվեց նաև, որ հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Մարիամ Սարգսյանը, Արմինե Սուքիասյանը, Արմինե Ներսիկի Սարգսյանը, 4-րդ կուրսի ուսանողուհիներ Վարդուհի Աբգարյանը, Նոնա Գևորգյանը ևս չեն մասնակցել թղթապանակի պաշտպանությանը:

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը նշեց, որ պրակտիկաները կազմակերպելիս ֆակուլտետին մեծ օգնություն են ցուցաբերել համագործակցող մի շարք դպրոցներ և մանկապարտեզներ: Նրանք պատրաստակամություն են ցուցաբերել համավարակի պայմաններում, պահպանելով բոլոր կանոնները, իրենց կրթական հաստատություններում ընդունել մեր ուսանողներին:

Դեկանն առաջարկեց այդ մանկապարտեզներին և դպրոցներին /տնօրեններին/ ֆակուլտետի անունից շնորհակալագրեր ուղարկել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Սկզբնական կրթության ֆակուլտետի հետ համագործակցող մի շարք դպրոցների և մանկապարտեզների տալ շնորհակալագրեր:

Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ - **5.** Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ. Պողոսյանը, Ս.Մարությանը, Շ.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

6. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - **1.** Առցանց հարթակում ուսանողական միջազգային գիտաժողով կազմակերպելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ այս տարի պլանավորվում է ամենամյա ուսանողական գիտաժողովն անցկացնել առցանց հարթակում՝ մասնակից դարձնելով նաև մեր միջազգային գործընկեր համալսարաններին: Գիտաժողովը նախատեսված է մայիսի սկզբին: Տեղեկատվական նամակը պատրաստ է, այն կուղարկվի ՀՊՄՀ-ի հետ համագործակցող համալսարաններին և կտեղադրվի ՀՊՄՀ կայքէջում:

Լ.Պողոսյանը նշեց, որ նախատեսվում է ուսանող-ղեկավար ձևաչափով զեկուցումներ. քանի որ գիտաժողովը միջազգայինի արժեք է ունենալու, ղեկավարի մասնակցությունը պարտադիր է: Նա առաջարկեց ստեղծել խմբագրական խորհուրդ, որը կզբաղվի գիտաժողովի նյութերի խմբագրման և ժողովածուի տեսքով այն տպագրելու հարցերով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ալլա Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրայնն առաջարկեց խմբագրական խորհրդում յուրաքանչյուր ամբիոնից 1-ական ներկայացուցիչ ընդգրկել, ցանկալի է ամբիոնների վարիչներին, գիտության և միջազգային համագործակցության հարցերով փոխդեկան Լ.Պողոսյանի ղեկավարությամբ:

Վ. Կարապետյանը նշեց, որ կփորձի նպաստել, որպեսզի գիտաժողովի լավագույն զեկուցումները ուղարկվեն տպագրման տեղական և միջազգային ամսագրերում:

Ք.Հովհաննիսյանն առաջարկեց յուրաքանչյուր ամբիոն իր աշխատանք-ները քննարկի, հետո վերջնական տարբերակը ներկայացնի հանձ-նաժողովին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընտրել գիտաժողովի խմբագրական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Լ.Պողոսյան՝ խմբագրական խորհրդի նախագահ
2. Ջ.Գյուլամիրյան՝ խմբագրական խորհրդի անդամ
3. Վ.Կարապետյան՝ խմբագրական խորհրդի անդամ
4. Ք.Հովհաննիսյան՝ խմբագրական խորհրդի անդամ

Որոշումն ընդունվեց միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Ապրիլի 29-ին՝ ժամը 14.20-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

Օրակարգ՝

1.2020-2021 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
2. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:	Ա.Դալլաքյան
3.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների քննարկում և հաստատում:	Ամբիոնների վարիչներ
4.Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում: • Առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսեր. • «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկա:	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
5.Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:	Ամբիոնների վարիչներ

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ամփոփիչ ատեստավորմանը նախընթաց՝ դեկանատը բացել է համապատասխան էլեկտրոնային հարթակ, որտեղ տեղադրված են ամփոփիչ ատեստավորմանն առնչվող բոլոր կարգերը, աշխատանքներին ներկայացվող պահանջները, հրամանները, գրաֆիկներն ու ժամանակացույցերը: Հրավերներն ուղարկված են ավարտական կուրսերի բոլոր ուսանողներին և ամբիոններին: Կցվելով հարթակին՝ ուսանողները և ամբիոնները կարող են ստանալ ամփոփիչ ատեստավորմանն առնչվող բոլոր հարցերի պատասխանները: Պարբերաբար հարթակը կհամալրվի նոր նյութերով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ քննաշրջանը ավարտվում է ապրիլի 30-ին, իսկ լուծարային փուլերն էլ նախատեսված են ավելի ուշ՝ մայիս ամսին: Հետևաբար այս պահին ավարտուն և լիարժեք տեղեկատվություն խորհրդին հնարավոր չէ ներկայացնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Ալլա Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հարցը հետաձգել և քննարկել խորհրդի հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - 3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

Ջ.Գյուլամիրյանը զեկուցեց, որ Մայրենիի ամբիոնի գծով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով բոլոր ավարտական

աշխատանքները և մագիստրոսական թեզերը երաշխավորվել են պաշտպանության: Աշխատանքները պատրաստ են, ուսանողներն աշխատում են ավարտաճառերի վրա: Պատրաստ են նաև հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրի ուսանողների ավարտական աշխատանքները, դրանք ևս երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

Տիկին Գյուլամիրյանը ներկայացրեց նաև հաջողված փորձ. ուսանողները երկու անգամ հանդիպում են ունեցել նախորդ տարվա պաշտպանած լավագույն շրջանավարտների հետ, ինչը մեծապես օգնել է նախապատրաստական աշխատանքներին:

Վ.Կարապետյանը նշեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ավարտական աշխատանքներ են գրում առկա ուսուցման համակարգի բալկալավրի կրթական ծրագրի 20 ուսանող և մագիստրոսի կրթական ծրագրի 16 ուսանող: Բոլոր աշխատանքներն ամփոփվել են և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգում կան աշխատանքներ, որոնց համար ամբիոնը հաջորդ շաբաթ կրկնակի նախապաշտպանություն է նախատեսել: Վ.Կարապետյանը որոշ աշխատանքների վերնագրերի մեջ մասնակի փոփոխություններ կատարելու ցանկություն հայտնեց:

Ք.Հովհաննիսյանը զեկուցեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը նախապես կազմակերպել է մի քանի նախապաշտպանություններ, արդյունքներն ամփոփվել են, և առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի բոլոր ուսանողների ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը երաշխավորվել են հրապարակային պաշտպանության: Ձայնագրությունները տեղադրվել են հարթակներում և ուսանողները ռեֆլեքսիա անելու հնարավորություն են ստացել: Ք.Հովհաննիսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ընթացքի մեջ է և արդեն ավարտվում է նաև հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը. քաղվածքը կնեկայացվի սահմանված վերջնաժամկետում՝ ապրիլի 30-ին: Նախորդ ուսումնական տարիներին ամփոփիչ ատեստավորումից անբավարար ստացած 2 ուսանող, որոնք նախընտրել և ավարտական աշխատանքներ են գրում Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի գծով, նույնպես բավարար չափով պատրաստ են:

Մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր գրող բոլոր ուսանողները նույնպես երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

/Բոլոր ամբիոնների քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը:

Ի պատասխան պարոն Կարապետյանի՝ ավարտական աշխատանքների թեմաներում մասնակի փոփոխություններ կատարելու հարցադրման՝ Հ.Խաչատրյանը խնդրեց առաջնորդվել ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջներով և համապատասխան կարգերով:

Հ. Խաչատրյանը, ի հավելումն պարոն Կարապետյանի խոսքի, խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը հրապարակային պաշտպանության չի երաշխավորել հեռակա ուսուցման համակարգի մեկ ուսանողի՝ Շուշանիկ Մուրադյանին: Նա 2021 թվականի մարտի 26-ին է վերադարձել տարկետումից և վերականգնվել է «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 5-րդ կուրսում. ուսանողը տարկետվել էր «Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) » մասնագիտությունից, որն այլևս չի գործում: Ուսանողուհին ինքը հրաժարվել է նախապաշտպանությունից, քանի որ ավարտական աշխատանքի վրա ըստ ամենայնի չի աշխատել և դիմում է գրել ու կրկին տարկետում ձևակերպել: Հետևապես, ամբիոնը նրան չի երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել:

2. Հանձնարարել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ պարոն Կարապետյանին՝

- կրկնակի նախապաշտպանության արդյունքների վերաբերյալ սահմանված ժամկետներում տեղեկատվություն տրամադրել՝ քաղվածքի տեսքով,
- առաջիկա ուսումնական տարում հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 5-րդ կուրսի ուսանողուհի Շուշանիկ Մուրադյանին տրամադրել խորհրդատվություն (ղեկավար՝ Վ. Կարապետյան) և հետամուտ լինել, որ ուսանողուհին ավարտական աշխատանքի ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվությամբ հանդես գա ամբիոնում:

ԼՍԵՑԻՆ - **4.** Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում:

- Առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսեր.

- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսեր.մանկավարժահետա-զոտական պրակտիկա:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ.Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Մնացականյանը, Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **5.** Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցող՝ Ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունը կցվում է:/

Ք.Հովհաննիսյանը նշեց, որ համավարով պայմանվորված՝ ուսուցիչների, դպրոցների հետ շփումները կազմակերպվել են առցանց: Այսպես օրինակ՝ «Դասվարներ» խմբի հետ Classroom-ի հարթակում 2-3 անգամ հանդիպումներ են կազմակերպվել 200-300 ուսուցիչների հետ, ինչը առիթ է դարձել նաև առերես հանդիպումների անհրաժեշտության: Հետագայում կապը այդ դպրոցների հետ կշարունակվի: Հանդիպումների ժամանակ քննարկվել են մաթեմատիկային առնչվող մասնագիտական և մեթոդական շատ հարցեր:

Գյուլամիրյանը ներկայացրեց, որ աշխատանք է տարվել Օհանավանի, Կարբիի, Չարենցավանի դպրոցների հետ: Արդյունավետ էր Օհանավանի և Կարբիի աշակերտների հետ հանդիպումը: Տնօրենների հետ պայմանավորվածություն կա. նրանց հետ հանդիպումներ կկազմակերպվեն առաջիկայում, և նրանք կայցելեն համալսարան, ֆակուլտետ, ամբիոն:

Վ.Կարապետյանը զեկուցեց, որ ձևավորվել են որոշակի կապեր նոր մանկապարտեզների հետ հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողների պրակտիկաների կազմակերպման ընթացքում: Այս տարի հնարավորություն է ստեղծվել համագործակցել Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հետ, որտեղ կա մանկապարտեզային 13 խումբ, «Հրաշք տնակ», մասնավոր մանկապարտեզի հետ, ինչպես նաև Մոսկվայի «Վերածնունդ» կրթահամալիրի հետ: Նա վստահեցրեց, որ այդ նոր կապերը ամբիոնը կպահի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս.Գրիգորյանը, Լ. Պողոսյանը, Ս.Մարությանը:

Լ.Պողոսյանը արձանագրեց, որ համավարակով պայմանավորված այս ուղղությամբ մեր աշխատանքները խիստ տուժել են:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- Հեռակա ուսուցման համակարգում «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական նոր ծրագիր մշակելու և կազմակերպելու հարցը:

Զեկուցող՝ Վ.Կարապետյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ջ.Գյուլամիրյանը, Արմինե Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հավանություն տալ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի՝ հեռակա ուսուցման համակարգում «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի նոր կրթական ծրագիր ստեղծելու գաղափարին, և ամբիոնի հաշվետվությունն այդ ուղղությամբ ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

/ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2021թ. մայիսի 5-ին տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը:

ՕՐԱԿԱՐԳ - *ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու հարցը:*

Զեկ.՝Հ. Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ – ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու հարցը:

Զեկ.՝Հ. Խաչատրյան

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ լրացել է ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի գործունեության ժամկետը: Համաձայն «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության համալսարանի ստորաբաժանումները պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածու են առաջադրում:

Նա առաջարկեց խորհրդի անդամներին ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ.Պողոսյանը, Ա.Թոփուզյանը, Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը:

Նրանք բոլորը առաջարկեցին Մաթեմատիկայի և

տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Բորիս Սերգեյի Նահապետյանի թեկնածությունը:

Բորիս Սերգեյի Նահապետյանի թեկնածությունը դրվեց բաց քվեարկության: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը: Քվեարկության արդյունքում՝ կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում առաջադրել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Սերգեյի Նահապետյանի թեկնածությունը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Մայիսի 27-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1.Առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա. Դալլաքյան
2. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:	Ա. Դալլաքյան
3. .Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
4.Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:	Ամբիոնների վարիչներ
5. 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա. Դալլաքյան
6. Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - **1.** Առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը:

Հ.Խաչատրյանն ասաց, որ երկրորդ կիսամյակի միջանկյալ աշխատանքները, ընթացիկ ստուգման ձևերը առցանց կամ առերես անցկացնելու որոշումը թողնված էր ամբիոններին, և ամբիոնները կարող են իրենք որոշել, թե ինչ ձևաչափով են ցանկանում

իրականացնել դրանք: Ինչ վերաբերում է քննաշրջանին, Հ.Խաչատրյանը նշեց, որ ամփոփիչ ստուգումները, քննությունները յուրաքանչյուր կուրսում թվով շատ չեն՝ հիմնականում 1 կամ 2, նաև համավարակի վիճակագրությունը նվազման միտում է գրանցում: Դրանով պայմանավորված՝ նա առաջարկեց հարցը քննարկել ֆակուլտետի խորհրդի նիստում և որոշել՝ ամփոփիչ ստուգումները, քննությունները կազմակերպել առցանց կա առերես տարբերակով:

Ս.Մարությանը նշեց, որ, իսկապես, համավարակի թվային տվյալները նվազում են և քննությունների առերես կազմակերպումը նպատա-կարմար կլինի և արդարացված:

Եվա Մնացականյանը նույնպես անդրադարձավ այն հանգամանքին, որ առերես կազմակերպված քննություններն ավելի նպաստավոր և արդյունավետ են:

Հռիփսիմե Հովհաննիսյանն ասաց, որ ուսանողի տեսանկյունից նույնպես առերես քննություններն ավելի նախընտրելի են, քանի որ առցանցի դեպքում ժամանակի և ուշադրության մեծ մասը հատկացվում է տեխնիկական կողմին:

Առաջարկությունը դրվեց քվեարկության:
Անցավ միաձայն:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին զեկույցն ընդունել ի գիտություն:
2. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի սկզբնական կրթության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական բոլոր ծրագրերի ամփոփիչ ստուգումները, քննությունները կազմակերպել առերես:
Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Լ.Պողոսյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը:

Լ.Պողոսյանը խնդրեց առավել ուշադիր և օբյեկտիվ լինել պրակտիկայի գնահատմանը և գնահատել ոչ թե ըստ դասախոսի կամ ուսանողի կատարած աշխատանքի ծավալի, այլ ըստ այդ աշխատանքների՝ վերջնարդյունքներին համապատասխանության: Նա նշեց, որ մեթոդիստների մոտ նկատվում է գնահատականների արհեստական բարձրացում: Հետևաբար պրակտիկայի պատասխանատուներին խնդրեց վերլուծության ժամանակ ուշադրություն դարձնել այդ հանգամանքին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին և պրակտիկայի ղեկավարներին՝ ուշադրության կենտրոնում պահել պրակտիկայի գնահատումը և իրականացնել վերլուծություններ:

3. ԲԿԾԱ 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկաների թղթապանակների պաշտ-պանությունը կազմակերպել առցանց տարբերակով:

ԼՍԵՑԻՆ - **4.** Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: *Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ*

/Հաշվետվությունները կցվում են:/

Ք. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում աշխատանքներն ընթացել են գրաֆիկի համաձայն և դեռևս ապրիլին քննարկումներ են անցկացվել: Մագիստրոսների մեջ կան ուսուցիչներ, որոնք ոչ միայն տեսական մասն են ավարտել, այլև արդեն ամփոփում են իրենց հետազոտական աշխատանքները: Հեռակա մագիստրատուրայում շատ են բակալավրական մասնագիտական կրթություն չունեցողները, ուստի նրանց տրամադրվել են դասընթացների սեղմագրեր, որպեսզի նրանք կարողանան մասնագիտական առումով կրթվել և գոնե նվազագույն մակարդակի հասնել. առաջին կուրսում այդպիսի աշխատանքներ են կատարվել: Իսկ երկրորդներում հետազոտական աշխատանքները կատարվում են: Աշխատանքներում չներգրավված ուսանողներ չկան:

Լ.Պողոսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մանկավարժության ամբիոնի գծով դասախոս-ուսանող աշխատանքները դեռ ընթացքի մեջ են, և արդյունքները պարզ կլինեն հունիսին, երբ ղեկավարները հաշվետվություններ կներկայացնեն:

Վ.Կարապետյանի փոխարեն հարցը ներկայացրեց Ս.Մարությանը. վերջինս ասաց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում ղեկավարների և մագիստրոսների հանդիպումների պարբերականությունը պահպանվում է: Ուսանողները աշխատում են և գնահատվում են ըստ պլանի: Դեռևս փորձարարական աշխատանքները չեն սկսել, բայց տեսական աշխատանքները կատարվում և ավարտվում են:

Ջ.Գյուլամիրյանի փոխարեն հարցը ներկայացրեց Լ.Տեր-Գրիգորյանը. վերջինս նշեց, որ մայրենիի և նրա դասավանդման մեթոդկայի ամբիոնում ևս աշխատանքները կատարվում են ըստ ժամանակացույցի, ղեկավարները հետևողական աշխատում են մագիստրոսների հետ, և աշխատանքներում չներգրավված ուսանողներ չկան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսայնը, Ե.Մնացականյանը, Ք.Ասմարյանը:

Լ.Պողոսայնն ասաց, որ մագիստրոսական թեզերի գնահատման կարգը ենթադրում է կուտակային միավորներ, և այս հարցը հարկավոր է քննարկել ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ հարցը հետաձգել հաջորդ նիստ:

ԼՍԵՑԻՆ - **5.** 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Հ. Հովհաննիսյանը, Ս.Մարությանը, Հ.Խաչատրյանը:

Շրջանավարտ Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց բոլորին՝ ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ողջ գործընթացը անխափան կազմակերպելու, ուսանողներին աջակցելու և դրական մթնոլորտ ապահովելու համար:

Հ. Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ֆակուլտետում հատուկ առանձնացվել է լսարան՝ ապահովված տեխնիկական բոլոր սարքավորումներով, որպեսզի անհրաժեշտության և ցանկության դեպքում ուսանողը հնարավորություն ունենա մասնակցել ամփոփիչ

ատեստավորմանը համալսարանից: Եվ նման դեպքեր արդեն գրանցվել են առկա ուսուցման համակարգի ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ: Տեխնիկական աջակցության խումբը և դեկանատի աշխատակիցները պատրաստ են աջակցելու և օգնելու ուսանողներին: Նա նշեց, որ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հետ կազմակերպվել են միթ հանդիպումներ, որտեղ բոլոր հարցերը (կազմակերպչական, տեխնիկական, բովանդակային) քննարկվել են, մայիսի 28-ից էլ նախատեսված են տեխնիկական փորձարկումները բոլոր ուսանողների համար անհատապես:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- Բակալավրական ծրագրի շրջանավարտների մասնագիտական հետագա կրթությունը շարունակելու, նրանց ուղղորդելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Հ. Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ բակալավրի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի հետ դեկանատի կողմից կազմակերպվել են մի շարք հանդիպումներ՝ շրջանավարտների մասնագիտական հետագա կրթությունը շարունակելու, համագործակցության, աշխատանքի տեղավորման հարցերի շուրջ: Ուսանողներին հետաքրքրում էին մագիստրոսական կրթական ծրագրերի բովանդակությունը, դասընթացները, ուսումը աշխատանքի հետ զուգակցելու խնդիրները: Հ.Խաչատրյանի կարծիքով այդ հանդիպումները հարկ է շարունակվել.ուսանողները ուղղորդումների, հիմնավորումների կարիք ունեն, հատկապես բարձր առաջադիմությամբ ուսանողները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ հանդիպումներ կազմակերպել բակալավրի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի շրջանավարտների հետ և քննարկել նրանց մասնագիտական հետագա զարգացման հարցերը, ներկայացնել ամբիոնների ծրագրերն ու անելիքները մագիստրատուրայի վերաբերյալ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Հունիսի 28-ին՝ ժամը 12.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

Նիստին մասնակցում էին նաև «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախագահ Յուրի Գրիգորյանը, ուսանողների կամավորական գործունեությունը համակարգող՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Իրինա Պոնոմարենկոն:

Օրակարգ ՝

1. 2020-2021 ուստարվա առկա/հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:	Ա. Դալլաքյան
2. Հաշվետվություն 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:	Հանձնաժողովների նախագահներ
3. Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտ-պանության արդյունքների մասին. • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա/ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկա/	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
4. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխա-տանքներին. • Որակի ապահովման խումբ • Ուսումնամեթոդական խումբ • Համալսարան-դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում • Կամավորական գործունեություն • Գրական ակումբ	Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան Լ.Պողոսյան, Ա.Խուգեյան Ի.Պոնոմորենկո Եվ.Մնացականյան

5. Ընթացիկ հարցեր: Հ.Հովհաննիսյան

- Սկզբնական կրթության ֆակուլտետի ՈՒԽ և ՈՒԳԸ հաշվետվությունները: Գ.Քոլոզյան

ԼՍԵՑԻՆ - 1. 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ք.Ասմարյանը, Ք.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հեռակա ուսուցման համակարգի 1-3-րդ կուրսերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին հարցը տեղափոխել և լսել խորհրդի հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - 2. Հաշվետվություն 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

Զեկուցող՝ Յուրի Գրիգորյան

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախագահ Մեյրան Ստեփանյանի հաշվետվությունը ներկայացրեց Հ.Խաչատրյանը:

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ա.Թոփուզյանը, Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը, Հ.Խաչատրյանն

Ս.Մարությանը շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահ պրն. Գրիգորյանին և հայտնեց, որ արդեն պլանավորել են հաջորդ տարի ավարտական և մագիստրոսական թեմաների մեջ ընդգրկել թեմաներ նաև վերջինիս առաջարկած բնագավառներից՝ առողջ ապրելակերպի, մանուկների ֆիզիկական դաստիարակության և այլն:

Ա.Թոփուզյանը համաձայն էր նախագահի առաջարկություններին: Հայտնեց, որ ֆակուլտետում պետք է ձևավորել գնահատման որոշակի չափանիշներ,

հստակ ձևակերպել՝ ուշադրություն դարձնելով ավարտական աշխատանքի ամբողջականության վրա.եթե կատարված հետազոտությունը չի բխում թեմայից, խնդիրները՝ նպատակից, եզրակացությունները չեն համապատասխանում խնդիր-ներին, ապա չկա աշխատանքի ամբողջականություն և չի կարող հաջողված և իր նպատակին ծառայած աշխատանք համարվել: Ճիշտ է, տարեցտարի արձանագրվում է դրական դինամիկա, բայց դեռ աշխատանքներ շատ կան, ղեկավարների պատասխանատվությունը պետք է բարձրացնել: Ընդդիմախոսների ինստիտուտն արդյունավետ չի գործում:

Լ.Պողոսյանը նշեց, որ ճիշտ է՝ փոփոխություններ շատ են կատարվել, սակայն այդ դինամիկայի պարագայում էլ նույն թերությունները կան և այդ ուղղությամբ բավականաչափ աշխատանքներ կան դեռ կատարելու:

Հ.Խաչատրյանն առաջարկեց հաշվետվություններն ուղարկել ամբիոններ՝ դրանք քննարկելու և համապատասխան եզրահանգումներ անելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ կազմակերպել ամբիոնային քննարկումներ ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվությունների և արդյունքների շուրջ:

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա/ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկա/

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

Տիկին Ա.Ղազարյանի հաշվետվությունը ներկայացրեց Ա.Խուգեյանը:

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը, Ա.Թոփուզյանը:

Ա. Թոփուզյանն ասաց, որ անկասկած մեծ փոփոխություն կա պրակտիկայի անցկացման որակի մեջ, սակայն պրակտիկան շատ բարձր է գնահատվում, ինչը մեխանիկորեն և հաճախ չարդարացված բարձրացնում է ավարտական թեզի վերջնական գնահատականը, քանի որ ուսանողը չունի մանկավարժական բառապաշար, չի տիրապետում մեթոդական գարծիքակազմին և այլն: Չպետք է շռայլել գնահատականները:

Հ.Խաչատրայնը նշեց, որ այդ խնդիրն առկա է, և պրակտիկայի ղեկավարների հետ այն բազմիցս քննարկվել է: Թղթապանակների պաշտպանությունը և արդյունքների գնահատումը հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է: Ուշագրավ է, որ պրակտիկայի առանձին բաղադրիչներով նշանակված բարձր գնահատականներն ուսանողների մի որոշակի մաս չի կարողանում պահպանել թղթապանակի պաշտպանության ժամանակ, և թղթապանակի պաշտպանության գնահատանիշը կարծես թե հնարավորինս հավասարակշռում է ուսանողի՝ պրակտիկայի վերջնական գնահատականը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշման խումբ
- Կամավորական գործունեություն
- Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան, Լ.Պողոսյան, Ա.Խուգեյան, Ի.Պոնոմորենկո, Եվ.Մնացականյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ երկրորդ կիսամյակում գրական ակումբը գործունեություն չի ծավալել, սակայն հույս հայտնեց, որ առաջիկա ուսումնական տարում այն նորից կվերասկսի իր գործունեությունը, ավելին՝ հարկավոր է խրախուսել, որպեսզի վերասկսի իր գործունեությունը «Երիտասարդ մաթեմատիկոս» ակումբը, կձևավորվեն նոր՝ կերպարվեստի, երաժշտության ակումբներ, կգործի կայուն երգչախումբ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար: Ակումբների գործունեությունը մի կողմից՝ կբարձրացնի ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, մյուս կողմից՝ կակտիվացնի ուսանողական առօրյան: Այս քննարկումներն արդեն վաղուց կան, բայց հարկավոր է գտնել այդ գործունեությունը խրախուսող միջոցներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Թոփուզյանը, Լ .Պողոսայնը, Հ.Խաչատրյանը, Ալ.Դալլաքյանը:

Լ.Պողոսյանը նշեց, որ հարկավոր է աշխատել մագիստրոսական աշխատանքների գնահատման համակարգը բարելավելու ուղղությամբ, իրականացնել վերջնարդյունքային գնահատում:

Ա.Թոփուզյանն ասաց, որ ցանկացած առարկա պետք է ունենա մանկավարժական բաղադրիչ և հետազոտական բաղադրիչ։

Հ.Խաչատրյանն առաջարկեց առաջիկա շաբաթվա ընթացքում կազմակերպել առցամց սեմինարներ և քննարկել կրթության որակի հետ կապված փաստաթղթերը՝ դասախոսների ուշադրությունը հրավիրելով բարելավման կարիք ունեցող հարցերի լուծման վրա։

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաշվետվություններն ընդունել ի գիտություն։

2. Աշխատանքային բոլոր խմբերի հաշվետվություններն ուղարկել խորհրդի անդամներին, ամբիոններ, ՈՒԽ։

3.Առաջիկայում դասախոսների համար կազմակերպել կրթության որակի հետ կապված փաստաթղթերի քննարկում։

ԼՍԵՑԻՆ - **5.** Սկզբնական կրթության ֆակուլտետի ՈՒԽ և ՈՒԳԸ հաշվետվությունները։

Զեկուցող՝ Հ.Հովհաննիսյան, Գ.Քոլոզյան

Տեխնիկական պատճառներով Հ.Խովհաննիսյանի փոխարեն ՈՒԽ հաշվետվությունը ներկայացրեց Գ.Քոլոզյանը։

/Հաշվետվությունները կցվում են։/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Հ.Խաչատրյանը։

Հ.Խաչատրյանը առաջարկեց ուսանողական կառույցներին՝ ակտիվացնել իրենց գործունեությունը, հանդես գալ նոր գաղափարներով ու առաջարկներով, իրենց աշխատանքներին մասնակից դարձնել և ընդգրկել ուսանողների առավել լայն շրջանակ։

Գ.Քոլոզյանը, դեկանի հարցին պատասխանելով, նշեց, որ ուսանողական կառույցների գործունեության 2020-2021 ուստարվա հիմնական դժվարությունն առցանց ձևաչափն էր, հատկապես առաջին կուրսեցիներին ուսանողական կյանքի մեջ ներգրավելու և ակտիվացնելու առումով։

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն։

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1.Ամփոփիչ ատեստավորման արդյունքների SWOT վերլուծություն։

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

/ SWOT վերլուծությունը կցվում է։/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Գ.Քոլոզյանը, Ա.Թոփուզյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամփոփիչ ատեստավորման արդյունքների SWOT վերլուծությունն տրամադրել ամբիոններին՝ քննարկելու և այդ ուղղությամբ աշխատանքները բարելավելու համար:

ԼՍԵՑԻՆ - 2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Հեղինե Ավետիսյանի՝ «Ինտերակտիվ պարապմունքների կլաստերային վերլուծությունը նախադպրոցական հաստատություն-ներում»* խորագրով ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս. Մարությանը, Ջ.Գյուլաիրյանը, Վ.Կարապետյանը, Ալլա Դալլաքյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Հ.Խաչատրյանը:
Ելույթ ունեցողները նշեցին, որ թեմայի նման ձևակերպումը որոշակի հարցեր է առաջացնում և խնդրահարույց է, առկա է որոշակի անորոշություն և ձևակերպման անճշտություն:

Քանի որ թեմայի հետ կապված հարցերը խորհրդի անդամների մոտ շատ էին, և վերաձևակերպման հետ կապված առարկություններ և մտահոգություններ ունեին առաջին հերթին հենց Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի խորհրդի անդամները, Հ.Խաչատրյանն առաջարկեց հետաձգել հարցի քննարկումը, այն լսել առաջիկա խորհրդի նիստին, մանավանդ որ հաջորդ նիստը նախատեսվում է մեկ շաբաթ անց: Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ պարոն Կարապետյանին էլ խնդրել մեկ անգամ ևս ամբիոնում հանգամանալից քննարկել թեման՝ նկատի ունենալով խորհրդի անդամների առաջարկությունները:

Առաջարկությունը դրվեց քվեարկության.կողմ՝22, դեմ՝1, ձեռնպահ՝0:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հարցը հետաձգել հաջորդ նիստ՝ վերնագրի վերաձևակերպման առաջարկությամբ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Հուլիսի 6-ին՝ ժամը 10.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց ընդլայնված նիստը:
https://meet.google.com/fpu-gnzn-vsi

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը։Մասնակցում էին նաև ֆակուլտետի ամբիոնների դասախոսները:

Օրակարգ ՝

1.

- 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները *(1-3-րդ կուսեր)* — Ա.Դալլաքյան
- 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի առաջին և երկրորդ կիսամյակների քննաշրջանի կազմակերպման մասին *(4-րդ կուսեր)*

2. Հաշվետվություն ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին: — Հ. Խաչատրյան

3. Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում: — Լ.Պողոսյան

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին *(1-3-րդ կուսեր)*

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը:

Դեկան Հ.Խաչատրյանը խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ֆակուլտետը, համավարակով պայմանավորված, աշխատել է միջանկյալ, ընթացիկ ստուգման ձևերի և ամփոփիչ ստուգումների կազմակերպման համակցված եղանակով՝ ապահովելով ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման ինչպես առցանց, այնպես էլ առերես տարբերակները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2.** 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի առաջին և երկրորդ կիսամյակների քննաշրջանի կազմակերպման մասին *(4-րդ կուսեր)*

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Հաշվետվություն ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին*:*

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

Առաջարկություն եղավ կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նախագահի ներկայացրած 2020-2021 ուստարվա հաշվետվությունը և բավարար գնահատել կատարված աշխատանքները. *կողմ՝23, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

ԼՍԵՑԻՆ - **3.** Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում:

Հաղ.՝ Լ.Պողոսյան

Լ.Պողոսյանը տեղեկացրեց, որ ավարտվում է 2016-2020 թ.թ.ռազմավարական ծրագրի գործողությունների 5-ամյա շրջափուլը, որը ենթադրում է կրթական ծրագրերի մասնագրերի, ուսումնական պլանների վերանայման, վերամշակման նոր գործընթաց: Այդ համատեքստում Լ. Պողոսյանը դիմեց ամբիոնների վարիչներին և որակի պատասխանատուներին՝ առաջարկելով արդեն իսկ կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ ամբիոններում և գործընթացին նախընթաց ունենալ ուսումնական պլաններում մասնագիտական առարկաների ընդգրկման, դրանց դասավանդման մոտեցումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ: Նա նաև խնդրեց այդ քննարկումների ժամանակ անպայման նկատի ունենալ կրթական ծրագրի վերջնարդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ. Տեր-Գրիգորյանը, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Հ. Խաչատրյանը:

Լ.Տեր-Գրիգորյանը ներկայացրեց, որ արդեն երկու տարի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը որոշակի խնդիրներ է նկատել՝ կապված ուսումնական պլանում հայոց լեզվի դասընթացների փոփոխության հետ. տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ԲԿԾ առկա համակարգում հայոց լեզվի դասընթացը կրճատվել է մեկ տարով, իսկ հեռակա համակարգում՝ երկու տարով: Ավելի ստույգ՝ շարահյուսության դասընթացը փոխարինվել է «Գործնական գրությունների ուսուցում» դասընթացով, և «Մայրենի լեզվի» դասընթացն անավարտ է մնում, մինչդեռ կարիք կա դասընթացն ավարտին հասցնելու:

Ե՛վ առկա, և՛ հեռակա համակարգերում վերացել են հայոց լեզվի բանավոր ամփոփիչ քննությունները, մինչդեռ բանավոր քննությունը կարևոր է ոչ միայն լեզվական գիտելիքի, այլև բանավոր խոսքի զարգացման համար: Անգլերենի դասընթացն

ավարտվում է բանավոր քննությամբ, իսկ հայոց լեզուն՝ ոչ: Շատ կարևոր է ամեն տարվա վերջում հայոց լեզվից ամփոփիչ բանավոր քննություն ունենալը:

Հեռակա ուսուցման համակարգում անընդունելի քիչ են հայոց լեզվի ժամերը՝ տարեկան 8 ժամ:

Այս ամենը ոչ միայն ազդում է շրջանավարտների՝ հայոց լեզվից ունեցած գիտելիքների և կարողությունների մակարդակի, այլև ընդհանրապես շրջանավարտների մասնագիտական պատրաստության որակի վրա: Հայոց լեզուն հայի արժեքային համակարգում պետք է բարձրագույն տեղ զբաղեցնի, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ կրթական համակարգում, ուսումնական պլաններում այն ունենա բարձրագույն կարգավիճակ: Դա կարևոր է նաև հայոց լեզվի վարկանիշը բարձրացնելու համար: Ուստի Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը անհրաժեշտ է համարում փոփոխություններ կատարել ուսումնական պլաններում:

Լ.Պողոսյանը, անդրադառնալով բարձրացված հարցին, նշեց, որ մայրենի լեզուն առաջնահերթություն է, և դա անվիճելի է: Կրթական ծրագրերի մասնագրերն ու ուսումնական պլանները կազմվում և կազմվել են ամբիոնների վարիչների և որակի ապահովման պատասխանատուների անմիջական մասնակցությամբ, փոփոխություններ անելու համար ևս դրանք ուղարկվում են ամբիոններ՝ քննարկելու և առաջարկություններ անելու, ապա՝ հաստատելու: Պողոսյանը նշեց, որ ինքը ոլորտի մասնագետ չէ, և, թե ինչպիսի դասընթացներ պետք է ընդգրկվեն ուսումնական պլաններում, որոշել և որոշում են բացառապես մասնագիտական ամբիոնները: Եվ այս ընթացքում այդ աշխատանքներն այդ տրամաբանությամբ էլ իրականացվել են, ուսումնական պլանից դասընթացներ հանել, կրճատել առանց ամբիոնի գիտության հնարավոր չէ: Լ.Պողոսյանը մեկ անգամ ևս հնչեցրեց այն մտահոգությունը, որ ամբիոնների դասախոսները ամբողջովին տեղեկացված չեն որակի փաստաթղթերին, այն ընթացակարգերին, որոնցով կազմվում և կիրառության մեջ են դրվում կրթական ծրագրերի մասնագրերն ու ուսումնական պլանները: Նա նաև նշեց, որ մասնագիտությունը ունի նաև այլ առաջնահերթություններ, որոնք նույպես պետք է արտացոլվեն մասնագիտության կրթական փաստաթղթերում, և այդ համատեքստում ոչ մի առաջնահերթություն մյուսի հաշվին չպետք է լինի: Լ.Պողոսյանը խնդրեց առջարկություններ մշակելիս և հատկապես դասընթացներ մշակելիս առաջնորդվել ոչ թե անձերով, դասավանդողների նախասիրություններով, այլ մասնագիտության վերջնարդյունքներով և շրջանավարտի՝ պահանջվող կարողունակություններով:

Լ.Պողոսյանը նաև հետաքրքրվեց՝ արդյոք մայրենիի դասավանդման մեթոդիկայի ժամերը ևս չեն կարող նպաստել ուսանողների մայրենիի իմացության զարգացմանը:

Ջ.Գյուլամիրյանը առարկեց այդ հարցադրմանը՝ հիմնավորելով, որ որևէ առարկայի մեթոդիկան հիմնվում է այդ առկայից ունեցած գիտելիքների վրա, այն էլ՝ բարձրագույն, ոչ դպրոցական մակարդակի գիտելիքի հիման վրա: Եվ մեթոդիկայի դասընթացը կառուցված է հենց այնպես, որ հայոց լեզվի մեթոդիկայի դասընթացը սկսվում է երկրորդ կուրսից այն պարզ պատճառով, որպեսզի նրա բաժինները հաջորդեն հայոց լեզվի

համապատասխան բաժիններին և ուսանողներն անհրաժեշտ մակարդակի գիտելիք ձեռք բերած լինեն:

Ջ. Գյուլամիրյանը նաև նշեց, որ նախորդ 5 տարիների կրթական ծրագրի ուսումնական պլանից հանվել են, իր կարծիքով, 3 շատ կարևոր դասընթացներ: Իհարկե այդ դասընթացները ներառվել են ուսումնական պլանում հատուկ դասընթացների ձևով, սակայն ցանկալի է, որ դրանք առանձին արտացոլվեն ուսումնական պլաններում: Ջ.Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ հայոց լեզվի դասընթացների, դրանց դասավանդման շուրջ քննարկում ունեցել է տիկին Տեր-Գրիգորյանի հետ, բայց այն այս պահի քննարկման հարց չէ, հարկավոր է հանգամանալից և հիմնավոր քննարկել այն: Լավ է, որ առաջիկայում նախատեսվում է աշխատանք ուսումնական պլանների շուրջ, որտեղ էլ որ կարտացոլվեն ամբիոնի առաջարկությունները, կլուծվեն այդ խնդիրները:

Ք.Հովհաննիսյանը հետաքրքրվեց՝ որքանով է ամբիոնը իրավասու փոփոխություն անելու մասնագիտական դասընթացի անվանման ձևակերպման մեջ:

Հ.Խաչատրյանը՝ համակարծիք տիկին Տեր-Գրիգորյանին, ևս կարևորեց ուսանողների մայրենի լեզվի իմացությունը, բանավոր և գրավոր գրագետ խոսք ձևակերպելու կարողությունները: Դրանք խիստ կարևոր առաջնահերթություն են հատկապես սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների համար: Այն նաև հիմք է կրթական ծրագրի մնացած բոլոր դասընթացներն արդյունավետ յուրացնելու և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: Դրանով պայմանավորված ուսումնական պլաններում մայրենիի դասընթացները, կիսամյակներում դրանց ընդգրկվածությունը, հատկացվող կրեդիտները և ժամաքանակը մշտապես ամենաշատն են եղել, և այսօր էլ գերակշռում են ուսումնական պլաններում: Կրթական ծրագրի կազմման բոլոր աշխատանքները մշտապես կատարվել են ամբիոնների վարիչների, որակի պատասխանատուների հետ համատեղ, և հատկապես այն, թե ուսումնական պլաններում ինչ դասընթացներ պետք է ներառվեն որոշել են մասնագիտական ամբիոնները, վարիչները: Իհարկե հարկավոր է նկատի ունենալ, որ գոյություն ունեն ուսումնական պլանի կազմման որոշակի սկզբունքներ, դասընթացների ներկայացվածության տոկոսային հարաբերակցություն, մասնագիտության առաջնահերթություններ և այլն: Հենց այս համատեքստում էլ Հ.Խաչատրյանը նշեց, որ ամբիոնների դասախոսների համար որակի ապահովման փաստաթղթերին ծանոթացնելուն նվիրված սեմինար-քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտություն է տեսնում:

Անդրադառնալով տիկին Տեր-Գրիգորյանի հնչեցրած մտահոգություններին՝ Հ.Խաչատրյանը նշեց, որ դրանց մեծ մասի լուծումները ամբիոնի քննարկման և որոշման տիրույթում են, և այդ մասին բազմիցս ասվել է: Ուսումնական պլաններում նոր դասընթացների ներմուծման կամ դասընթացների փոփոխության համար ևս ամբիոնը ունի իրավասություն: Հարկավոր է միայն հարցը հիմնավոր ուսումնասիրել, ձևակերպել կոնկրետ առաջարկություն, այն ներկայացնել ֆակուլտետի խորհրդի քննարկմանը, և ապա՝ համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը: Սակայն դա հարկավոր է

անել տարեսկզբին, հաջորդ տարվա ուսումնական պլաններում անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել՝

- ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Լուսինե Պողոսյանին՝ առաջիկա շաբաթվա ընթացքում նախատեսել որակի ապահովման փաստաթղթերի վերաբերյալ առցանց սեմինար քննարկումներ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմի համար:
- Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ տիկին Ջ.Գյուլամիրյանին՝ նախաձեռնել ֆակուլտետում մայրենիի դրվածքը բարելավելուն միտված ամբիոնային քննարկումներ, առաջարկությունները ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ և դեկանատ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան